4. Տեղեկատվություն միջուկային անվտանգության բնագավառում իրականացված հետազոտության վերաբերյալ, որը կա և Կողմերից մեկի սեփականությունն է, կա և հասանելի է նրան: Կողմերից յուրաքանչյուրը պետք է գործադրի բոլոր ջանքերը մյուսին անհապաղ տրամադրելու հետազոտության արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն, որոնց նկատմամբ վաղ ուշադրությունը կարող է բխել հասարակության անվտանգության շահերից:
5. Միջուկային տեղակայանքների և/կամ ռադիոակտիվ նյութերի շահագործման փորձի վերաբերյալ գեկույցներ, օրինակ՝ միջուկային միջադեպերի, վթարների, աշխատանքի դադարեցման և համակարգերի ու բաղադրամասերի հուսալիության վերաբերյալ պատմական տվյալների բազայի մասին:
6. Միջուկային տեղակայանքների և ռադիոակտիվ նյութերի անվտանգության և ֆիզիկական պաշտպանության, երաշխիքների կատարման (միջուկային նյութերի հաշվառում և հսկողություն) և միջուկային տեղակայանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ կարգավորող ընթացակարգեր և վերահսկողություն:
7. Վաղ ծանուցում Կողմերի համար անմիջական հետաքրքրություն ներկայացնող կարևոր միջադեպերի և առաջացած տեխնիկական հարցերի վերաբերյալ:

#### **Բ. Համագործակցություն միջուկային անվտանգության հետազոտության բնագավառում**

Միջուկային անվտանգության հետազոտության համատեղ ծրագրերի և նախագծերի կամ այն ծրագրերի և նախագծերի շուրջ համագործակցության պայմանները, որոնց շրջանակներում իրականացվող միջոցառումները բաշխված են Կողմերի միջև, ներառյալ Կողմերից յուրաքանչյուրին պատկանող փորձարարական տեղակայանքների օգտագործումը և/կամ համակարգչային կողերի փոխանակման ծրագրերը, որոնք կրննարկվեն յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առանձին և կարող են դառնալ առանձին համաձայնագրի առարկա:

#### **Գ. Վերապատրաստում և նշանակումներ**

Առկա միջոցների սահմաններում և համապատասխան դրամական միջոցների հատկացման հնարավորության դեպքում Կողմերը կարող են համագործակցել փոխադարձաբար իրենց անձնակազմերի համար որոշակի վերապատրաստման և

փորձառական հնարավորությունների տրամադրման ուղղությամբ: Բացի այդ՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում առանձին կրնարկվեն նաև մի Կողմի անձնակազմի ժամանակավոր նշանակումները մյուս Կողմի գերատեսչությունում, որի համար ընդհանուր առմամբ, կպահանջվի Կողմերի միջև առանձին համաձայնագիր: Եթե այլ համաձայնություն ձեռք չի բերվել, մասնակիցների աշխատավարձի, օրապահիկի և ուղևորության հետ կապված ծախսերը կհոգա դրանք ստանձնող Կողմը:

## II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ա) Սույն Համաձայնագրի շրջանակներում տեղեկատվության փոխանակումը կարող է իրականացվել նամակագրության, հաշվետվությունների և այլ փաստաթղթերի, ինչպես նաև նախօրոք կազմակերպված այցելությունների և հանդիպումների միջոցով՝ ըստ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի: Պարբերական հանդիպումները կարող են կազմակերպվել սույն Համաձայնագրի շրջանակներում տեղեկատվության փոխանակման և համագործակցության իրականացումը վերանայելու և համագործակցության շրջանակներում առաջացող հարցերը քննարկելու համար: Նման հանդիպումների ժամկետը, վայրը և օրակարգը կհամաձայնեցվեն նախօրոք:

Բ) Յուրաքանչյուր Կողմ կնշանակի կառավարիչ սույն Համաձայնագրի շրջանակներում իր կողմից իրականացվող փոխանակման աշխատանքները համակարգելու համար: Կառավարիչները կլինեն տեղեկատվության փոխանակման շրջանակներում փոխանցված բոլոր փաստաթղթերի, ներառյալ բոլոր նամակների պատճենները ստացողները, եթե չկա այլ պայմանավորվածություն կամ, եթե սույնով այլ բան նախատեսված չէ: Կառավարիչները պատասխանատու կլինեն փոխանակման ուղղությունների մշակման և համակարգման համար: Առանձին ուղղությունների համար Կողմերը կարող են նշանակել անմիջական կապ իրականացնող մեկ կամ մի քանի տեխնիկական համակարգողներ: Այդ տեխնիկական համակարգողները կապահովեն, որ երկու կառավարիչները ստանան բոլոր փոխանցված փաստաթղթերի պատճենները:

Գ) Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերի միջև փոխանակված ցանկացած տեղեկատվության կիրառման կամ օգտագործման համար պատասխանատու է ստացող Կողմը, իսկ փոխանցող Կողմը չի երաշխավորում այդ տեղեկատվության համապատասխանությունը որևէ կոնկրետ օգտագործման կամ կիրառման հետ կապված:

Դ. Հնարավորության սահմաններում յուրաքանչյուր Կողմը կազակցի մյուսին՝ իրենց համապատասխան կառավարությունների այլ գերատեսչություններից տեղեկատվություն ստանալու հարցում:

### III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

#### A) Ընդհանուր դրույթներ

Կողմերը նպաստում են սույն Համաձայնագրի շրջանակներում փոխանակված տեղեկատվության հնարավոր լայն տարածմանը՝ պահպանելով յուրաքանչյուր Կողմի պետության ազգային օրենսդրության պահանջները, կանոնակարգերն ու վարած քաղաքականությունը, և հաշվի առնելով սեփականություն հանդիսացող կամ այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվության պաշտպանության անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, իրենց ազգային օրենսդրությանը, կանոնակարգերին և վարած քաղաքականությանը համապատասխան՝ Կողմերը իրավունք են վերապահում յուրաքանչյուր առանձին դեպքում կիրառել լրացուցիչ սահմանափակումներ սույն հոդվածում նշված տեղեկատվությունից դուրս տեղեկատվության տարամադրման հետ կապված:

Սույն Համաձայնագրի շրջանակներում տրամադրված, ստեղծված կամ փոխանակված մտավոր սեփականության նկատմամբ կիրառվող դրույթները սահմանված են Մտավոր սեփականության իրավունքների մասին Հավելվածում, որը կկիրառվի սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացվող բոլոր միջացառումների նկատմամբ, եթե Կողմերը գրավոր այլ բան չեն նախատեսել:

#### B) Սահմանումներ

1. «Տեղեկատվություն» եզրույթը նշանակում է ոչ գաղտնի տեխնիկական տեղեկատվություն, որը վերաբերում է միջուկային տեղակայանքների և ռադիոակտիվ նյութերի անվտանգության և ֆիզիկական պաշտպանության կարգավորմանը և վերահսկողությանը, երաշխիքների կատարմանը, միջուկային տեղակայանքների և ռադիոակտիվ նյութերի ազդեցությանը շրջակա միջավայրի վրա և միջուկային անվտանգության բնագավառում հետազոտական ծրագրերին: Այն ներառում է նաև գիտական կամ հետազոտական տվյալներ, գնահատման մեթոդներ կամ սույն Համաձայնագրի շրջանակներում տրամադրված, ստեղծված կամ փոխանակված ցանկացած այլ գիտելիք կամ տեղեկատվություն:
2. «Սեփականություն հանդիսացող տեղեկատվություն» եզրույթը նշանակում է սույն Համաձայնագրի շրջանակներում տրամադրված, ստեղծված կամ փոխանակված տեղեկատվություն, որը պարունակում է առևտրային գաղտնիք կամ այլ կոմերցիոն տեղեկատվություն, որը ենթակա չէ հրապարակման:
3. «Այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվություն» եզրույթը նշանակում է «սեփականություն հանդիսացող տեղեկատվությունից» տարբեր տեղեկատվություն, որը ենթակա չէ հրապարակման, և որը սույն Համաձայնագրի շրջանակներում տրամադրող Կողմի պետության օրենսդրությամբ, կանոնակարգերով կամ վարած քաղաքականությամբ պաշտպանված է հասարակությանը հայտնի դառնալուց:

**Գ) Սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվություն**

1. Սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվություն ստացող Կողմը պետք է հարգի դրա արտոնյալ կամ զաղտնի բնույթը:
2. Սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվության պատրաստման ընթացակարգն է.  
ա) սույն Համաձայնագրի շրջանակներում սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվություն փոխանցող Կողմը պետք է ապահովի, որպեսզի փաստաթղթի յուրաքանչյուր էջը հստակորեն նշագրված լինի սեփականություն հանդիսացող տեղեկատվության մասին հետևյալ սահմանափակող մակագրությամբ.

**«Սեփականություն հանդիսացող տեղեկատվություն. Շտարածել առանց (լրացնել փոխանցող Կողմի անունը) գրավոր համաձայնության»:**

- թ) Ստացող Կողմն առանց փոխանցող Կողմի նախնական գրավոր համաձայնության չպետք է հրապարակի կամ որևէ այլ կերպ տարածի այս սահմանափակող մակագրությունը կրող սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվությունը, որը չի համապատասխանում կամ, որը հակասում է սույն Համաձայնագրի պայմաններին:
- զ) Ստացող Կողմը պետք է ապահովի, որպեսզի այս սահմանափակող մակագրությունը լինի իր տրամադրած սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի ցանկացած պատճենի կամ վերարտադրված տարբերակի վրա:
- դ) Այն դեպքում, եթե փոխանցող Կողմը տրամադրում է սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվությունն առանց պահանջվող սահմանափակող մակագրության, փոխանցող Կողմը պետք է առաջիկա հնարավորության դեպքում տեղեկացնի ստացող Կողմին այդ մասին՝ տրամադրելով նրան սահմանափակող մակագրությունը պարունակող համապատասխան փաստաթուղթը:
- ե) Ստացող Կողմը պետք է գործադրի բոլոր ջանքերը՝ հավաքելու սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվություն կրող բոլոր սխալ նշագրված փաստաթղթերը և կանխելու դրանց հետագա տարածումը փոխարինելով դրանք ճիշտ նշագրված փաստաթղթերով:
- զ) Այն դեպքում, եթե ստացող Կողմը տրամադրում է սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվությունը, որը չի համապատասխանում կամ, որը հակասում է սույն Համաձայնագրի պայմաններին, ստացող Կողմը պետք է անհապաղ տեղեկացնի այդ մասին փոխանցող Կողմին:
3. Սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվության տարածումը.

ա). Սույն Համաձայնագրի շրջանակներում սեփականություն հանդիսացող տեղեկատվություն ստացող Կողմը կարող է առանց փոխանցող Կողմի նախնական համաձայնության տրամադրել այն իր աշխատակիցներին և ստացող Կողմի կառավարության այլ գերատեսչություններին և մարմիններին պայմանով, որ:

- i. յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար սահմանվում են փաստաթղթեր, որոնց մասին աշխատակիցները և պետական այլ մարմիններն ու գերատեսչությունները պետք է տեղյակ լինեն՝ իրենց ծառայողական պարտականություններն իրականացնելու նպատակով,
  - ii. ստացող Կողմը պետք է ապահովի, որպեսզի այդ աշխատակիցները և պետական այլ մարմիններն ու գերատեսչությունները չօգտագործեն սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվությունը որևէ ոչ պետական կամ առևտրային նպատակով, և
  - iii. սեփականություն հանդիսացող նման փաստաթղթային տեղեկատվությունը կրում է սահմանափակող մակագրություն՝ սույն Համաձայնագրի III հոդվածի «Գ» բաժնի 2-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան:
- բ) Ստացող Կողմը սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվությունը կարող է տարածել ավելի լայնորեն, քան նախատեսված է սույն Համաձայնագրով, այդ թվում տրամադրելով այն ստացող Կողմի հետ պայմանագրի կողմ հանդիսացողներին և խորհրդատուններին, ինչպես նաև ստացող Կողմի թույլտվություն ունեցող կամ լիցենզավորված անձանց, միայն փոխանցող Կողմի նախնական գրավոր համաձայնությամբ: Կողմերը կձգտեն ապահովել նման համաձայնություն՝ իրենց ազգային օրենսդրությամբ, կանոնակարգերով և վարած քաղաքականությամբ թույլատրված շրջանակներում, ինչպես նաև պայմանով, որ:
- i. յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար պետք է սահմանվի, որ սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվությանը ծանոթանալը նման ստացող անձանց անհրաժեշտ է բացառապես ստացող Կողմի հետ աշխատանքային գործունեության, պայմանագրի, թույլտվության կամ լիցենզիայի շրջանակներում իրենց աշխատանքներն իրականացնելու համար,
  - ii. նման ստացող անձինք կնքել են տեղեկատվության չբացահայտման պայմանագիր,
  - iii. նման ստացող անձինք չեն օգտագործի այդ սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվությունը որևէ այլ ոչ պետական կամ առևտրային նպատակներով,

- iv. նման ստացող անձինք համաձայն են օգտագործել այդ սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվությունը միմիայն իրենց աշխատանքային ծառայությունների, պայմանագրի, թույլտվության կամ լիցենզիայի պայմանների շրջանակներում իրականացվող աշխատանքների համար:
- q) Կողմերը պայմանովորվում են սույն Համաձայնագրի շրջանակներում սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվության պատշաճ մշակման և տարածման վերաբերյալ ծագած հարցերի դեպքում խորհրդակցել և ստանալ գրավոր պարզաբանումներ:

## **Դ) Փաստաթղթային բնույթի այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվություն**

1. Փաստաթղթային բնույթի այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվություն ստացող Կողմը պետք է պահպանի այդ տեղեկատվության գաղտնի բնույթը:
  2. Փաստաթղթային բնույթի այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվության նշագրման ընթացակարգն է.
- ա) Սույն Համաձայնագրի շրջանակներում փաստաթղթային բնույթի այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվություն փոխանցող Կողմը պետք է ապահովի, որպեսզի նման տեղեկատվությունը պարունակող ցանկացած փաստաթղթի յուրաքանչյուր էջ հստակորեն և համապատասխան ձևով նշագրված լինի սահմանափակող մակագրությամբ, որը կիրառելի է այլ գաղտնի կամ արտոնյալ բնույթի տեղեկատվության համար փոխանցող Կողմի ազգային օրենսդրությանը, կանոնակարգերին և վարած քաղաքականությանը համապատասխան: Նշագրումը պետք է ներառի հետևյալ սահմանափակող մակագրությունը.

**«Գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվություն (ըստ փաստաթղթի բնույթի). Չ տարածել առանց (լրացնել փոխանցող Կողմի անունը) գրավոր համաձայնության»:**

- թ) Ստացող Կողմը պետք է ապահովի, որպեսզի համապատասխան սահմանափակող մակագրությունը լինի իր տրամադրած՝ այլ գաղտնի կամ արտոնյալ բնույթի տեղեկատվությունը պարունակող փաստաթղթերի ցանկացած պատճենի կամ վերաբարդված տարբերակի վրա:
- զ) Փոխանցող Կողմը պետք է ապահովի, որպեսզի սույն Համաձայնագրի շրջանակներում փոխանցվող ցանկացած փաստաթղթային բնույթի այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվություն ուղեկցվի հայտարարությամբ, որը կհաստատի, որ փոխանցվող տեղեկատվությունը պաշտպանված է հանրային բացահայտումից՝ փոխանցող Կողմի ազգային օրենսդրությանը, կանոնակարգերին կամ կառավարության վարած քաղաքականությանը համապատասխան, և որ այն տրամադրվում է պայմանով, որ ստացող

Կողմը այդ տեղեկատվության համար կապահովի ըստ էռթյան պաշտպանության նույն մակարդակը, ինչպիսին ապահովում է փոխանցող Կողմի կառավարությունը:

- դ) Այն դեպքում, եթե փոխանցող Կողմը տրամադրում է փաստաթղթային բնույթի այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվություն առանց փոխանցվող տեղեկատվության բնույթին համապատասխան պահանջվող սահմանափակող մակագրության, փոխանցող Կողմը պետք է առաջին իսկ հնարավորության դեպքում տեղեկացնի ստացող Կողմին այդ մասին տրամադրելով նրան պատշաճ կերպով նշագրված սահմանափակող մակագրությունը կրող փաստաթղթերը:
- ե) Ստացող Կողմը պետք է գործադրի բոլոր ջանքերը՝ հավաքելու այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվություն պարունակող ոչ պատշաճ ձևով՝ նշագրված փաստաթղթերը և կանխի դրանց հետազա տարածումը՝ փոխարինելով դրանք պատշաճ ձևով նշագրված փաստաթղթերով:
- զ) Այն դեպքում, եթե ստացող Կողմը փաստաթղթային բնույթի այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվությունը տրամադրում է սույն Համաձայնագրի պայմաններին չհամապատասխանող կամ դրանց հակասող ձևով, ստացող Կողմը պետք է անհապաղ տեղեկացնի այդ մասին փոխանցող Կողմին:

### 3. Այլ փաստաթղթային բնույթի գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվության տարածումը

- ա) Սույն Համաձայնագրի շրջանակներում ստացած այլ փաստաթղթային բնույթի գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվություն ստացող Կողմը կարող է առանց փոխանցող Կողմի նախնական համաձայնության այն տրամադրել ստացող Կողմի աշխատակիցներին և իր կառավարության այլ մարմիններին և գերատեսչություններին պայմանով, որ
  - i. յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար սահմանվում են փաստաթղթեր, որոնց մասին աշխատակիցները և պետական այլ մարմիններն ու գերատեսչությունները պետք է տեղյակ լինեն՝ իրենց ծառայողական պարտականություններն իրականացնելու նպատակով,
  - ii. ստացող Կողմը պետք է ապահովի, որպեսզի այդ աշխատակիցները և պետական այլ մարմիններն ու գերատեսչություններ չօգտագործեն այլ փաստաթղթային բնույթի գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվությունը որևէ ոչ պետական կամ առևտրային նպատակով,
  - iii. այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվություն պարունակող նման փաստաթղթերը պետք է կրեն համապատասխան սահմանափակող մակագրություն՝ սույն Համաձայնագրի III հոդվածի «Դ» բաժնի 2-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան։
- բ) Ստացող Կողմը կարող է այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվություն պարունակող փաստաթղթերը տարածել ավելի լայնորեն, քան թույլատրված է սույն Համաձայնագրի դրույթներով, ներառյալ

տրամադրելով դրանք ստացող Կողմի հետ պայմանագրի կողմ հանդիսացող անձանց և խորհրդատուներին, ինչպես նաև բույլտվություն ունեցող կամ լիցենզավորված անձանց՝ միայն փոխանցող Կողմի նախնական գրավոր համաձայնությամբ: Ստացող Կողմը համաձայնում է պահպանել փոխանցող Կողմի սահմանած՝ փաստաթղթային բնույթի այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվությունը երրորդ անձանց փոխանցելու ցանկացած սահմանափակումները:

- գ) Կողմերը համաձայնում են սույն Համաձայնագրով նախատասեկած՝ փաստաթղթային բնույթի այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվության պատշաճ մշակման և տարածման վերաբերյալ ծագած հարցերի դեպքում խորհրդակցել և ստանալ գրավոր պարզաբանումներ:

### **Ե) Ոչ փաստաթղթային բնույթի այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվություն**

Սույն Համաձայնագրի շրջանակներում տրամադրված, ստացված կամ փոխանցված ոչ փաստաթղթային սեփականություն հանդիսացող կամ այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվության նկատմամբ Կողմերը պետք է կիրառեն սույն Համաձայնագրի սեփականություն հանդիսացող փաստաթղթային տեղեկատվության նկատմամբ սահմանված սկզբունքները համաձայն III հոդվածի «Գ» բաժնի, և այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվության նկատմամբ սահմանված սկզբունքները՝ համաձայն III հոդվածի «Դ» բաժնի՝ պայմանով, որ նման սեփականություն հանդիսացող կամ այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվություն տրամադրող Կողմը ստացող Կողմին ծանուցել է տրամադրվող տեղեկատվության բնույթի մասին:

### **Զ) Խորհրդատվություն**

Եթե որևէ պատճառով Կողմերից մեկը տեղեկանում է, կամ կարող էր ողջամտորեն տեղեկանալ, որ ի վիճակի չէ կատարելու սույն Համաձայնագրի III հոդվածով սահմանված որևէ պարտավորություն, ապա նա այդ մասին անմիջապես պետք է տեղեկացնի մյուս Կողմին: Կողմերը դրանից հետո պետք է խորհրդակցեն իրենց հետագա համապատասխան գործողությունները որոշելու համար:

### **Է) Այլ**



1. Սույն Համաձայնագրով նախատեսված որևէ դրույթ Կողմերին չի խանգարի առանց սահմանափակումների օգտագործել կամ տարածել սույն Համաձայնագրից դուրս այլ աղբյուրներից ստացված տեղեկատվությունը:
2. Սույն Համաձայնագրի շրջանակներում որևէ միջուկային տեղեկատվություն, որը վերաբերում է միջուկային գենքի տարածման առումով զգայուն տեխնոլոգիաներին չպետք է փոխանակվի:

#### IV. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Ա) Սույն Համաձայնագրով նախատեսված որևէ դրույթ չպետք է Կողմերից որևէ մեկից պահանջի կատարել որևէ գործողություն, որը կհակասի իր օրենսդրությանը, կանոնակարգերին կամ վարած քաղաքականությանը: Սույն Համաձայնագրի պայմանների և այդ օրենսդրության, կանոնակարգերի և վարած քաղաքականության միջև հակասություն առաջանալու դեպքում Կողմերը համաձայնում են խորհրդակցել՝ նախքան որևէ գործողություն ձեռնարկելը:
- Բ) Եթե չկա այլ պայմանավորվածություն, սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունից բխող բոլոր ծախսերը կատարում է դրանք ստանձնող Կողմր: Կողմերի պարտականությունների կատարումը պայմանավորված է իրենց համապատասխան պետական մարմնի կողմից դրամական միջոցների հատկացմամբ և Կողմերի նկատմամբ կիրառելի օրենսդրությամբ, կանոնակարգերով և վարած քաղաքականությամբ:
- Գ) Սույն Համաձայնագրի դրույթների մեջնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած տարածայնություն կամ հարց լուծվում է Կողմերի միջև խորհրդակցությունների միջոցով՝ նախապատվությունը տալով անզերեն լեզվով տեքստին:
- Դ) Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի իրականացումն ավարտելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով Կողմերի կողմից ստանալու օրվանից և կմնա ուժի մեջ հինգ տարի ժամկետով: Կողմերի գրավոր համաձայնությամբ դրա գործողությունը կարող է երկարածզվել լրացուցիչ ժամանակահատվածով: Երկարածզումն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով:
- Ե) Սույն Համաձայնագրով պաշտպանված ողջ տեղեկատվությունը՝ ներառյալ, բայց չսահմանափակելով սեփականություն հանդիսացող և այլ գաղտնի կամ արտոնյալ տեղեկատվությունները, պետք է շարունակեն մնալ պաշտպանված սույն Համաձայնագրի գործողության ժամկետը լրանալուց կամ դադարելուց հետո՝ սույն Համաձայնագրի դրույթներին համաձայն, եթե Կողմերի միջև չկա այլ գրավոր պայմանավորվածություն:
- Զ) Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ Կողմերի գրավոր համաձայնությամբ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով: Արձանագրություններն ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով:

Է) Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ նախատեսված դադարեցման ժամկետից առնվազն 180 օր առաջ գրավոր ծանուցում ուղարկելով մյուս Կողմին:

Սույն Համաձայնագրը կնքված է երկու բնօրինակով՝ անգլերեն և հայերեն լեզուներով, երկու տեքստերն էլ հավասարագոր են:

<p>Ամերիկայի Միացյալ Նահանգների միջուկային կարգավորող հանձնաժողովի կողմից՝</p> <p></p> <p>Քրիստոփեր Թ. Հանսոն Նախագահ</p> <p>Ժամկետ, վայր 14 March 2023 Rockville Md.</p>	<p>Հայաստանի Հանրապետության միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի կողմից՝</p> <p></p> <p>Նախագահ</p> <p>Ժամկետ, վայր 14 March 2023 Rockville Md.</p>
---	--

## **Մտավոր սեփականության իրավունքների մասին Հավելված**

### **1. Ընդհանուր պարտականությունը**

Կողմերը կապահովեն սույն Համաձայնագրի շրջանակներում ստեղծված կամ տրամադրված մտավոր սեփականության համարժեք և արդյունավետ պաշտպանությունը և համապատասխան միջոցառումների իրականացումը: Այդպիսի մտավոր սեփականության իրավունքները պետք է տարանջատվեն սույն Հավելվածով սահմանված կարգով:

### **2. Շրջանակը**

- Ա) Սույն Հավելվածը կիրառվում է սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացվող համագործակցության բոլոր միջոցառումների նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Կողմերը կամ նրանց կողմից նշանակված անձինք ունեն այլ պայմանավորվածություն:
- Բ) Սույն Համաձայնագրի նպատակների համար «մտավոր սեփականություն» հասկացությունը պետք է ունենա 1967 թ. հուլիսի 14-ին Ստոլկիումում կնքված «Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածում սահմանված հասկացության իմաստը և կարող է ներառել Կողմերի կողմից համաձայնեցված այլ հարցեր:
- Գ) Յուրաքանչյուր Կողմ, անհրաժեշտության դեպքում իր մասնակիցների հետ պայմանագրերով կամ այլ իրավական միջոցներով, պետք է ապահովի, որ մյուս Կողմը կարողանա ձեռք բերել սույն Հավելվածի դրույթներին համապատասխան տրամադրված մտավոր սեփականության իրավունքները: Սույն Հավելվածը որևէ կերպ չի փոփոխում կամ խախոռում իրավունքների բաշխումը որևէ Կողմի և դրա մասնակիցների միջև, ինչը որոշվում է՝ այդ Կողմի պետության օրենսդրությանը և պրակտիկային համապատասխան:
- Դ) Եթե չկա այլ պայմանավորվածություն սույն Համաձայնագրի շրջանակներում, մտավոր սեփականության հետ կապված վեճերը պետք է լուծվեն շահագրգիռ մարմինների, կամ անհրաժեշտության դեպքում՝ Կողմերի կամ նրանց նշանակած անձանց մասնակցությամբ՝ խորհրդակցությունների միջոցով: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ վեճը կարող է ներկայացվել միջնորդ դատարան պարտադիր ուժ ունեցող որոշման հասնելու համար՝ համաձայն միջազգային իրավունքի կիրառելի նորմերի: Եթե Կողմերի կամ նրանց նշանակած անձանց միջև չկա այլ գրավոր պայմանավորվածություն,

կգործեն Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (ՄԱԿ ՄԱԻՀ) իրավարարության կանոնները:

Ե) Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը կամ ժամկետի լրանալը չպետք է ազդի սույն Հավելվածում սահմանված իրավունքների և պարտականությունների վրա:

### 3. Իրավունքների տարանջատումը

Ա) Յուրաքանչյուր Կողմ ունի համընդհանուր գործող, ոչ բացառիկ, անբեկանելի, հեղինակային հնորարից ազատ լիցենզիայի իրավունք՝ ցանկացած երկրում թարգմանել, վերարտադրել և տարածել սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունից ուղղակիորեն բխող՝ մենագրություններ, գիտական և տեխնիկական ամսագրերի հոդվածներ, գեկույցներ և գրքեր: Սույն Համաձայնագրի շրջանակներում՝ հեղինակային իրավունքով պաշտպանված իրավարակված աշխատանքների վրա պետք է նշվեն աշխատության հեղինակների անունները, եթե հեղինակը բացահայտորեն չի առարկում դրա դեմ:

Բ. Բացառությամբ վերը նշված հոդված 3-ի Ա պարբերություն նշված իրավունքների՝ մտավոր սեփականության մյուս իրավունքները պետք է տարանջատվեն հետևյալ կերպ.

- 1) Նախքան իրավիրյալ հետազոտողի կողմից սույն Համաձայնագրի շրջանակներում համատեղ գործունեությանը մասնակցելը, հյուրընկալող Կողմը կամ նրա կողմից նշանակված անձը և այն Կողմը կամ նրա կողմից նշանակված անձը, որը աշխատանքի է վերցրել կամ հովանագորել է իրավիրյալ հետազոտողին կարող են քննարկել և որոշել իրավիրյալ հետազոտողի կողմից ստեղծվող ցանկացած մտավոր սեփականության իրավունքների բաշխումը: Նման որոշման բացակայության դեպքում իրավիրյալ հետազոտողը պետք է ստանա հյուրընկալող հաստատության քաղաքականության համաձայն տրամադրվող մտավոր սեփականության իրավունքներ, պարզեցներ, հավելավճարներ և ոռյալթիներ: Սույն Համաձայնագրի նպատակներից ելնելով՝ իրավիրյալ հետազոտող է համարվում այն հետազոտողն, ով իրավիրվում է մյուս Կողմի հաստատություն (հյուրընկալող հաստատություն) և ներգրավվում բացառապես հյուրընկալող Կողմի ծրագրած աշխատանքներում:
- 2) ա) Բացառությամբ հոդված 3-ի Բ պարբերության կետ 1-ում նշված միջոցառումների, համատեղ գործունեության շրջանակներում Կողմերից մեկի կողմից աշխատանքի վերցված կամ հովանավորվող անձանց ստեղծած մտավոր սեփականությունը, տնօրինում է այդ Կողմը:

Միաժամանակ երկու Կողմերի կողմից աշխատանքի վերցված կամ հովանավորվող անձանց ստեղծված մտավոր սեփականությունը տնօրինում են երկու Կողմերը համատեղ: Բացի այդ՝ մտավոր սեփականություն ստեղծած յուրաքանչյուր անձ պարզեավճարներ, հավելավճարներ և ռոյալթիներ ստանում է այն հաստատության քաղաքականության համաձայն, որը նրան աշխատանքի է ընդունել կամ հովանավորում է:

բ) Եթե չկա կիրառումն ապահովող կամ այլ համաձայնագրով ձեռք բերված այլ պայմանավորվածություն, յուրաքանչյուր Կողմ իր պետության տարածքում իրավունք ունի օգտագործել և թույլ տա այլոց օգտագործել համատեղ գործունեության ընթացքում ստեղծված մտավոր սեփականությունը:

գ) Իր պետության տարածքից դուրս Կողմի իրավունքները որոշվում են փոխադարձ համաձայնությամբ՝ հաշվի առնելով, օրինակ, Կողմերի և նրանց մասնակիցների ներդրումների հարաբերակցությունը համատեղ գործունեությունում, մտավոր սեփականության իրավական պաշտպանություն և լիցենզավորում ձեռք բերելու հանձնառության աստիճանը ու նման այլ համապատասխան գործոններ:

դ) Չնայած վերոնշյալ հոդված 3-ի, Բ պարբերության, ենթապարբերություն 2-ի, «ա» և «բ» կետերի, եթե Կողմերից յուրաքանչյուրը գտնում է, որ որոշակի ծրագիր կարող է հանգեցնել կամ հանգեցրել է այնպիսի մտավոր սեփականության ստեղծման, որը չի պաշտպանվում մյուս Կողմի պետության օրենսդրությամբ, ապա Կողմերը պետք է անմիջապես անցկացնեն քննարկումներ՝ մտավոր սեփականության իրավունքի բաշխումը որոշելու համար: Եթե քննարկումներ նախաձեռնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, համաձայնություն ձեռք չի բերվում, նշված ծրագրի շրջանակներում համագործակցությունը կասեցվում է Կողմերից որևէ մեկի խնդրանքով: Այնուամենայնիվ, մտավոր սեփականություն ստեղծող անձինք պետք է ունենան հոդված հոդված 3-ի, Բ պարբերության, ենթապարբերություն 2-ի, «ա» կետով նախատեսված պարզեավճարների, հավելավճարների և ռոյալթիի իրավունք:

ե) Ցանկացած համագործակցության գործունեության շրջանակներում ստեղծված յուրաքանչյուր զյուտի համար զյուտարար(ներ)ին աշխատանքի վերցրած կամ հովանավորող Կողմը պետք է անհապաղ բացահայտի այդ զյուտը մյուս Կողմին ցանկացած փաստաթղթի և տեղեկատվության հետ միասին, որն անհրաժեշտ է, որպեսզի մյուս Կողմին հնարավորություն ընձեռի հաստատել դրա նկատմամբ այն իրավունքներ, որոնք նա կարող է ունենալ: Կողմերից մեկը գրավոր կարող է դիմել մյուս Կողմին՝ հետաձգելու համար նման փաստաթղթերի կամ տեղեկատվության իրապարակումը կամ իրապարակայնորեն

բացահայտումը՝ այդ գյուտի նկատմամբ իր իրավունքները պաշտպանելու համար: Եթե չկա այլ գրավոր համաձայնություն, հետաձգումը չպետք է գերազանցի վեց ամիսը այն օրվանից, եթե գյուտ ստեղծած Կողմը բացահայտել է այն մյուս Կողմին:

#### **4. Բիզնեսի տեսանկյունից գաղտնի տեղեկատվությունը**

Այն դեպքում, եթե ժամանակին բիզնեսի տեսանկյունից գաղտնի ճանաչված տեղեկատվությունը տրամադրվում կամ ստեղծվում է սույն Համաձայնագրի շրջանակներում, Կողմերից յուրաքանչյուրը և նրա մասնակիցները պետք է ապահովեն այդ տեղեկատվության պաշտպանությունը կիրառելի օրենքներին, կանոնակարգերին և վարչական ընթացակարգերին համապատասխան: Տեղեկատվությունը կարող է ճանաչվել «բիզնեսի տեսանկյունից գաղտնի», եթե այն անձը, ով ունի այդ տեղեկատվությունը, կարող է դրանից ստանալ տնտեսական շահույթ կամ կարող է մրցակցային առավելություն ձեռք բերել այն անձանց նկատմամբ, ովքեր չունեն այն, և տեղեկատվությունը սովորաբար հայտնի չէ կամ հրապարակայնորեն հասանելի չէ այլ աղբյուրներից, ու այդ տեղեկատվությանը տիրապետողը նախկինում այն մատշելի չի դարձրել՝ առանց ժամանակին դրա գաղտնի բնույթը պահելու պարտավորություն սահմանելու: